



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

**Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ  
նախագահ պարոն Փ. Թադևոսյանին**

**Հարգելի պարոն Թադևոսյան**

Ի պատասխան Ձեր 20.01.2016թ. (առցանց համար 4F15-41E1-BF34) գրության, հայտնում եմ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1-րդ հոդվածի համաձայն **2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը** (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում **բացառապես էլեկտրոնային եղանակով՝** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Միաժամանակ,

1. ՀՀ կառավարության 25.08.1998թ. «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» N525 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի համաձայն՝ հաշվարկային փաստաթղթում արտացոլման ենթակա վավերապայման է **նաև ակտիվներ ձեռք բերող կամ ծառայություններ ստացող հարկ վճարողի ՀՎՀՀ-ի (ՀՀ օրենսդրությամբ ՀՎՀՀ-ն պարտադիր լինելու դեպքում) նշումը.**

2. ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ օրենսդրությամբ ՀՎՀՀ-ներ տրամադրելու առանձնահատկություն սահմանված չէ,

3. ՀՀ կառավարության 04.06.2015թ. «Կապի կամ հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքերում այլ ուղեկցող փաստաթղթերի և կապի խափանումները վերացնելուց հետո նախկինում դուրս

չգրված ուղեկցող փաստաթղթերի դուրս գրման կարգը սահմանելու մասին» N594-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի համաձայն, մասնավորապես՝ 2016 թվականի հունվարի 1-ից հետո՝ նաև այլ հաշվարկային փաստաթուղթ համարվող ուղեկցող փաստաթուղթ (այլ հաշվարկային փաստաթուղթ համարվող ուղեկցող փաստաթուղթ դուրս գրելու պարտավորության դեպքում) դուրս գրելու անհնարինության դեպքում, Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքի մատակարարումը (առաքումը, տեղափոխումը) պարտադիր կարգով իրականացվում է թղթային կրիչի վրա լրացված և հարկ վճարողի կողմից վավերացված (ստորագրված և կնիքի առկայության դեպքում՝ կնքված) այլ ուղեկցող փաստաթղթերով՝ համաձայն կարգով հաստատված ձևի:

Հաշվի առնելով վերը նշվածը, հայտնում եմ, որ *մինչև այլ հաշվարկային փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով դուրս գրելու համապատասխան ծրագրային փոփոխությունների ներդրումը «e-invoicing» համակարգում, **ոչ ոեզիդենտ կազմակերպություններին մատուցվող ծառայությունների մասով*** կարող են դուրս գրվել թղթային կրիչի վրա լրացված և հարկ վճարողի կողմից վավերացված (ստորագրված և կնիքի առկայության դեպքում՝ կնքված)՝ այլ ուղեկցող փաստաթղթեր՝ առանց նշելու ստացողի ՀՎՀՀ-ն:

**Հարգանքով՝**



**Վ. Միրումյան**